

ԱՊՈԹՁ




Աղօթողը շատ բան բաելու կարիք չունի: Մաքսաւորը մէկ խօսք արտասանեց ու իր աղօթքը լսելի եղաւ եւ ան քերեցաւ իր մեղքերու բեռէն: Մովսէս լուս բերնով աղաղակեց ու ծովը յատակէն բաժնեց: Դուն ալ, եթէ ամբողջ սրտով աղաչես, կրնաս մեղքերու ծովը ցամքեցնել եւ բարկութեան ալիքները կասեցնել: Եթէ Աստուծմէ պատասխան չես ստանար, պատճառը այն է, որ չես բախանձեր կամ սրտով չես աղօթեր եւ կամ վնասակար բան մը կը խնդրես, իսկ եթէ յարատեւ աղօթքներով հոգիի օգտակար բան մը խնդրես, անկարելի բան է, որ Աստուծ զայն չընդունի: Ահաւասիկ, Եղիայի աղօթքները երկինքը բացին եւ գոցեցին, Դաւիթին աղօթքները հրեշտակին սուրբ անշարժացուցին, Յովնանի աղօթքները զինք կէտ ծուկի փորին կինդանի դուրս բերին, Քանանացիին աղօթքները իր աղջկան մարմինէն դեւեր դուրս հանեցին, աղօթքները պոռմիկները սրբացուցին, հիւանդները բժշկեցին, բորոտները մաքրեցին, կոյրերը լուսաւորեցին եւ մեղաւորները արդարացուցին:

(ՃԱ.ՌԵՐ Յովհան Մանդակունի)

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՀԱՅՑ. ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ
Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼԱՎԱՐԻ ԽՐՆՉՈՒԹԻՆ ՀՎԱՏԱՏՈՒՄ

2.-Պատրաստութիւն ընծաներուն

Գ.-ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ
ՀԱՄԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Եետոյ դարձեալ ծածուկ կը կարդայ. «Նոյնական բաժանում օրինեց, շնորհակալութիւն յայտնեց, խմեց, եւ իրեն հետ բազմած ընտրեալ եւ սուրբ աշակերտներուն տուա, ըսկելով», եւ բարձրածայն կ'եղանակէ.- «Խմեցէք ասկէ բոլորդ: Ասիկա նոր ոխտի իմ արիւն է, որ ձեզի եւ շատերուն համար կը բափուի, մեղքերու քառուեան եւ բողոքեան համար» :

Ս. Հաղորդութեան Խորհուրդը բանաձեւերն են անոնք, որոնք կը կազմեն Ս. Պատարագի հիմնական կրիզով՝ Քրիստոսի կողմէ պատգամուած, առաքեալներուն կողմէ կատարուած եւ մեր եկեղեցոյ հայրապետներուն կողմէ կանոնադրուած: Վեհագոյն եւ սրբազնագոյն պահն է այս, որ կը ներկայանայ հաւատացեալներուն. Յիսուսի Սարմինն ու Արիւնը խորհրդանշող հացն ու զինին կ'ընծայուին ժողովուրդին որպէս Սարմին եւ Արիւն Քրիստոսի, եւ աստուծային երկնային այս պարգևին որպէս երախտագիտութիւն... Շարունակելի

ՃՐԱԳ ԸԱԲԱԺԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ -

Bouj-Hammoud, P.O.Box 80810-Tel/Fax:01-258300-facebook-ի էջ Jerak ՃՐԱԳ ՔԵՐ

ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգս Ա. Քիմ. Սարգսիսան

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՅՈՒ ԽՈՍՔ ԻՆ ՈՅԵՐՈՒՄ ԲՐԱԳ Է ՈՒ Խ ԾԱՒՇԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(Ա. 119.105)

Ժ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 8 ՕԳՈՍՏՈՒ 2024

ԹԻՒ 32

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԹԱԶԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Ես. 7.1-9: Ա. Կր. 13.1-14.5: Մր. 2.1-12

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՈՍԻ ԱԵՏԱՐԱՆ

ԸՆՍ ՄԱՐԿՈՍԻ 2.1-12

Քանի մը օրեր ետք Յիսուս վերադարձաւ Կափառնաում: Անմիջապէս, որ լուր տարածուեցաւ, թէ տան մէջ կը գտնուի, շատեր հաւաքուեցան հոն, այնքան որ դրան առջեւ իսկ տեղ չէր մնացեր եւ Յիսուս Աստուծոյ խօսքը կը քարոզէր անոնց:

Այդ միջոցին Յիսուսի բերին անդամալոյծ մը, որ չորս հոգիներ շալկած էին: Երբ ամբոխին պատճառով չկրցան զայն Յիսուսի մօտ բերել, քակեցին տունին տանիքը եւ առաստաղը բանալով՝ անդամալոյծը մահիճով վար իջեցուցին: Յիսուս անոնց հաւատքը տեսնելով ըսաւ անդամալոյծին. «Որդեակ, մեղքերդ ներւած ըլլամ քեզի»:

Օրէնքի ուսուցիչներէն ոմանք, որոնք հոն նատած էին, սկսան մտովի քննադատել զայն. «Խմչալէ՞ս կը համարձակի ասանկ բան ըսել: Ըրածը հայինութիւն է: Աստուծմէ զատ ո՞վ կրմայ մեղքերը ներել»:

Յիսուս վայրկեանին գիտցաւ անոնց մտածումը եւ ըսաւ. «Խմչո՞ւ այդպէս կը մտածէք: Ո՞ր մէկը աւելի դիմին է: Անդամալոյծին «մեղքերդ ներուած են քեզի» ըսե՞լը, թէ «ե՛լ, մահիճդ ա՛ն եւ տունդ զնա» ըսելը: Բայց, որպէսզի զիտնար, թէ մարդու Որդին երկրի վրայ իշխանութիւն ունի մեղքերը ներելու՝ ահա՛ նաեւ կը բժշկեմ զայն»:

Ու դառնալով անդամալոյծին, ըսաւ. «Քեզի կ'ըսեն. ե՛լ, ա՛ն մահիճդ եւ տունդ զնա»: Անդամալոյծը անմիջապէս բոլորին առջեւ ոտքի ելաւ, վերցուց իր մահիճը եւ դուրս ելաւ: Բոլորն ալ զարմացան. կը փառաւորէին զԱստուծ եւ կ'ըսէին. «Այսպիսի բան բնաւ տեսած չէինք»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՈՒԵՐ

ԵՓԵՍՈՍԻ Ա. ԺՈՂՈՎՈՅՆ 200 Ա. ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ



Եփեսոսի Տիեզերական ժողովը իր տօնակատարութիւնը ունի Հայց. Եկեղեցւոյ մէջ՝ Վերափոխման Բարեկենդասնի Շաբաթ օրը:

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏՎԱԽԱՆ

Եփեսոսի տիեզերական ժողովը գումարութեաւ 431 քուականին, մասնակցութեամբ՝ 200 հայրապետներու, քննելու համար Նեստորի աղանդաւրական մոլար վարդապետութիւնը:

Նեստոր կ'ըսէք, որ Յիսուս մարդ
ծնաւ մեզի նման, ապա աստուածային բ-
նութիւն ստացաւ: Նեստոր կ'ուսուցանէք
նաեւ, որ Ս. Կոյս Մարիամ Աստուա-
ծածին չէ, այլ՝ մարդածին: Նեստորի այս
մոլար վարդապետութիւնը մեծ խոռվու-
թիւն յառաջացուց:

Նեստորի դատապարտելի ընթացքը քննելու համար, Փոքր Թէոդորոս կայսեր հրամանով, Եփեսոս քաղաքին մէջ, 200 հայրապետներու մասնակցութեամբ, տեղի ունեցաւ տիեզերական ժողով։ Ժողովի ընթացքին դատապարտուեցան Նեստորն ու իր համախոհները եւ հաստատուեցաւ Կիւրեղ Աղեքսանդրացիի քանաձեր՝ Քրիստոսի բնութեան վերաբերեալ «Սի բնութիւն Բանին մարմնացելոյ» նախադատութեան մէջ խտացնելով։

Ըստ այս բանաձեւին՝ Ցիսուս ծնաւ որպէս Աստուած եւ իր աստուածային ու մարդկային բնութիւնները անշփոք կերպով իրար միացան եւ կազմեցին **մեկ բնութիւն**: Իսկ Ս. Կոյսը դաւանեցին **Աստուածածին**:

Հայ եկեղեցին եւս ընդունեց Եփեսոսի
ժողովի կանոններն ու որոշումները եւ
եկեղեցական օրացոյցին մէջ յատուկ օր
ալ Աշանակեց տօնելու եւ յաւերժաց-
նելու համար այդ ժողովի լիշտակիր:

Այստեղ անհրաժեշտ կը համարենք
յիշատակել, որ Հայ եկեղեցին կ'ընդու-
նի միայն երեք տիեզերական ժողովներ՝
Նիկիոյ, Եփեսոսի եւ Կ. Պոլսոյ, եւ կը
դաւանէ միայն անոնց որոշումներն ու
բանաձեւումները:

Ի՞նչ ՀԱՆԴԻՍԱԼՈՐՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԿԱՐԴԱՑՈՒԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ

Աւետարանի ընթերցումը միւս
բոլոր ընթերցումներէն շատ աւելի
մեծ բացառութիւն ունի: Զայն կը
կարդան առանձին հանդիսաւորու-
թեամբ: Սարկաւագը կը ձայնէ Օրթի
(Ոտքի), քահանան՝ Խաղաղութիւն ամէ-
նուղ, դպիրները՝ եւ ընդ հոգւոյդ
քում (Նաեւ քո՛ւ հոգիիդ), սարկա-
ւագը՝ երկիւղածութեամբ լուարուք
(Երկիւղածութեամբ մտիկ ըրէք),
Աւետարանը կարդացողը՝ Սրբոյ
Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի,
որ ըստ Մատթէոսի (Յիսուս Քրիս-
տոսի Աւետարանը՝ Մատթէոսի հա-
մաձայն), դպիրները՝ Փառք քեզ Տէր
Աստուած մեր (Փա՛ռք քեզի, Տէր
Աստուած մեր), սարկաւագը՝ Պռոս-
խումէ (Մտիկ ընե՛նք), ժողովուրդը՝ ա-
սէ Աստուած (Աստուած է, որ կը խօսի):

ՀԱԳԵՒՄ
ՊԱՏ ԳԱՍ

Կ' ԱՆՐԱԴԱՍԱ՞ ՆՔ
ՅԻՍՈՒԽԻ ՏՈՒՖ
ԲԱՐԻՔԵՐՈՒՄԵ

«Սեղանապետը համտեսեց զինիի
փոխուած ջուրը, բայց զփոցաւ թէ ուրկէ
էր, թէեւ սպասաւորները, որոնք ջուրը
լեցուցած էին, զիտէին» (Յհ. 2.9):
Սեղանապետը զիտէր, թէ փեսան որքան
զինի ունէր իր տրամադրութեան տակ եւ
զիտէր, որ զինին սպառած էր, բայց թէ
այս նոր զինին ուրկէ՝ եկած էր՝ չէր
զիտէր: Եւ ասիկա է տարօրինակը.
որովհետեւ սեղանապետը փեսայէն
աւելի տեղեակ պէտք էր ըլլար զինիի եւ
հար-սանիքի ընթացքին գործածուելիք
ամէն ուտելիքներու քանակին: Գիտ-
նալը՝ իր պարտականութիւնն էր: Բայց
հնու կը տեսնենք, թէ ան չէր զիտէր
զինիին ուրկէ՝ եկած ըլլալը, չէր զիտէր,
թէ ասիկա Յիսուսին պարզեն էր իրենց:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ
ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Այսօր որքա՞ն մարդիկ կան որոնք
կը վայելեն տեսակ-տեսակ բարիքներ եւ
սակայն չեն զիտեր, թէ այդ բոլորին
տուիշը Աստուած ինքն է: Կ'անդրադառ-
նա՞նք, որ կեանքը եւ կեանքին ամէն մէկ
օրը եւ օրուան ամէն մէկ ժամը եւ օրը
լեցնող իրաքանչիւր բարիք Յիսուսի
պարգևեն է մեզի:

ՕԳՆԵ ՄԵԶԻ ՈՒՎ ՏԵՐ

ԵԹԷ ԿԱՄ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

Եթէ Ասիրակուած ես
Արդարութիւն կը Փնտուես,
Կարահ ՍԱՀՄՈՍ 55

Ականջ տուր աղօքիս, ո՞վ Աս-
տուած խնդրանքներս մի՛ անտեսեր:
Նայէ՛ ինձի եւ պատասխան տուր:
Հոգիս տրտում կ'ալեկոծի եւ խռովքի
կը մատնուիմ՝ թշնամիին սպառնա-
լիքներէն եւ ամբարիշտներու տուած
նեղութիւններէն, որովհետեւ անիրա-
տութիւն կը բափեն զիխուս, եւ բար-
կութեամբ ոխ կι պահեն ինձի դէմ:
Սիրոս տագնապի մէջ է, մահուան
սարսափը պատեր է զիս: Ահ ու դողը
քոներ է զիս եւ սոսկումը զիս համա-
կեր: Երանի, թէ աղաւնիի պէս թեւ ու-
նենայի, հեռու քոչէի, հանգիստ
գտնէի: Այն՛, հեռո՞ւ հեռո՞ւ վախչէի,
անապատի մէջ բնակէի: Ծուտով
ինձի ապաստան գտնէի սաստիկ
հովէն ու փոթորիկէն:

Խառնէ՛, ո՞վ Տէր, բաժնէ անոնց
լեզուները, որովհետեւ քաղաքին մէջ
միայն վայրագութիւն եւ հակառա-
կութիւն կը տեսնեմ, որոնք անոր
պարիսապմերուն վրայ կը շրջին օր ու
գիշեր, եւ զայն կը լեցնեն յանցազոր-
ծութեամբ ու դժբախտութեամբ, զայն
կը լեցնեն աւերածութեամբ:

Անզգամը իր հօրը խրատը կ'անարգէ, իսկ ան որ յանդիմանութեան կը հանդուրժէ՝ խոհեմ է: Երբ արդարութիւն տիրէ, ամէն ինչ կը բարգաւաճի, իսկ ամբարիշտները արմատախիլ պիտի ըլլան: (Առակ 15.5)